

891.99

7-50

[1925

-8 NOV 2011

Պրիմարնե բար յերեսի, մասեն

ՄԱԴԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՆՈՐ ԴԱՐԲՆՈՑ

891.99  
Պ-50

ՀԱՅ ՊՐՈԼԵՏ-ԴՐՈՂՆԵՐԻ ԱՍՏՈՅԱՆԻ

1925

Гравлит № 2191. Тифлис Тираж 1000.

Թիֆլիս, Փ. Տ. Կ. Ա. Պոլից. Տրեստի 4-րդ տպ., Պուշկ. 8.

MINISTERSTVO  
Внутреннихъ делъ.

ТИФЛИССКИЙ  
КОМИТЕТЪ  
по деламъ печати.

Въ типографію „Эпоха“

28 февраля 1911 г.

№ 466

Гор. Тифлисъ.

Канцелярія Комитета, по  
приказанию г. Предсѣдате-  
ля, просить типографію за-  
держать выпускъ брошюры  
на армянскомъ языке, подъ заглавиемъ: „Повѣ-  
сти“, книга 2-я соч. Мадата Петросяна, впредь до  
особаго распоряженія.

Секретарь Комитета, А.Л. Тусевъ

Ժամանութ. — Այս պատճենը 1911 թվին գրավվեց  
տարական ցենզուրայի կողմից ու այրեցին:

Բանգիս 1909թ.

~~ԱՄՈՒՐ ՊԱՀԵՑԵՔ. ԱՐՅՈՒՆ ԱՐՑՈՒՆՔՈՎ Ե  
ՁԵՌԸ ԲԵՐՎԱԾ~~

6000  
37543

Բանտարկված եյի այդ ժամանակ...  
Յերեք որ եր, վոր ինձ կալանավորել ե-  
յին։ Մեծ գործարանի փոքրիկ բանվորներս գոր-  
ծաղուլ եյինք հայտարարել. կոպեկները չեր մեր  
նպատակը և վոչ ել ժամերի թիվը. ուզում ե-  
յինք միանալ և միության վիթխարի ույժով  
տակն ու վրա անել նեխված կյանքը, քար ու  
քանդ անել փթած որենքները։ Ծրագրում եյինք  
հանդուգն քայլեր, և ահա կես գիշերին սենյակս  
յեկան, ու յես—նրանց դերին եյի։ Հըացանների  
կոթերի հարվածներ տեղացին զլիսիս։ Ինձ տա-  
րան բանտ։

Բայց ինձ վհատեցնողը դա չեր. ահաբեկ-  
ված սրաով սպասում եյի, թե ինչ ե կատար-  
վելու դուրսը, աչքերս սլարսպի այդ ահռելի  
դռնից չեյին հեռանում։ Ամեն մի նոր լուսացած  
որ, ինձ համար ցանկալի փրկություն եր մոտե-  
ցնում... Յեկ այդպես լուսացրի չորրորդ որը։

Սիրտս ավելի անհանգիստ եր բաքախում, վանդակից ամուր բռնած՝ դիտում եյի, Գլխիս վերև շշուկ լսվեց. այդ միջոցին դեպի իմ փեղկը վերին հարկից իջեցնում եյին բարակ թելից կապած մի թղթի կտոր. — նամակ, նամակ, ագահությամբ առա այն և անգիտակցաբար մոտեցրի շրթունքներիս. Աչքերիս չեյի ուղում հագատալ. նրանք եյին ընկերներս. — Խայթ, Սարոկին, Մարքս, Շտախբերդ, Մալինին... նրանք կալանավորված չեն, ազատ են, մտքով թռա նըրանց մոտ. Թելի ծայրը սեղմել եյի ձեռքումս, վոր նա չփախչի և անհամբեր նայում եյի վերև. այդ քարացած պատերի մեջ զգացածս, այդ փոքրիկ սփոփանքով ուղում եյի յերկար ապրել. Ընկերներս ազատ են և դա բավական է. Փակ բանտում նամակ ստանալ. — նա ներս եքերում իր հետ կյանք. իր ծալքերում պահում ե լույս, ջերմություն, սերը... կարդացի, կարդացի ագահությամբ, և յերբ վերջացնում եյի, հանկարծ աչքովս ընկավ նամակի մի յեղին մատիտով գծած մի յերկու չարագսւշակ տող. «Նպատակին հասանք, բայց կոփը սոսկաւ յեր. Խայթը, Սարոկինը, Շտախբերդը, Մալինը, Մարքսը և Նիկիտինսկին բռնված են. նըրանց հանձնել են դաշաային-դատարանին, շուտով կը բերեն բանտ, ոգնիր նրանց ինչով կարող

ես, մնացածներս մի կերպ կարողացանք ազատվել. Ես գերազանց եյի. այդ տողերը յես չկարդացի, այլ կյանեցի ամբողջ հոգով, աչքերս մթնեց և յես ցած ընկա:

Յես խելագարված եյի. այդ տողերը յես չկարդացի, այլ կյանեցի ամբողջ հոգով, աչքերս մթնեց և յես ցած ընկա:

Վորքան ելի այդպես մնացել չգիտեմ, յերբ ուշքի յեկա, առաջին պահանջս այն թելն եր. ընկա վեղկին, վիզս դեպի վեր, ու ամբողջ կրծքով գոռացի. — Հարկան, հարկան, կախիր թուշը, թելը... կախիր...

— Կեց օրք?

Նայեցի ցած. դիմացս կանգնած պահապան զինվորը դաժան դեմքով, աչքերը խոժողուած, հրացանի ծայրը ուղղած դեպի պատուհանս, նայում եր ինձ: Մեր հայցըները հանդիպեցին իրար, և նա զայրույթը զապած՝ հրացանը քաշեց իրան:

Մի փոքր հետո թելը դանդաղ իջավ ցած. այնտեղ կար մատիտ, թուղթ. յերկտողովս շնորհակալությունս հայտնեցի և խնդրեցի հաճախ խոսել ինձ հետ:

Մութը թանձը ծալքերով սողում եր բանտի պարիսպներից ներս, շուրջս լուռ եր. գիշերային մեռած լուսություն. կապանքների, շղթաների մեջ նիրհում եր այդ ահոելի շինությունը, զսպված ու կատաղի:

Դուրսը թեթև շշուկ լսվեց. պարիսպի գլո-

ները շարժվեցին ու մեկ-մեկ եկան, շարվեցին բանտի պահապանները։ Շառաջունով բացվեց բանտի դուռը։ Ներս մտավ զինվորների մի հոծ խումբ, խառնվեցին իրար և սպայի մի թեթև ակնարկով քարացան ու պատճեղ կազմեցին։

— Введите! — գոռաց սպան, ավելի թափով շարժելով մերկացրած սուրբ։

Լսվեց շղթաների վողբը, սիրտս, կարծես, ել չեր բարախում, շնչառությունս ներս ելի առել ու խեղղվում եյի անզոր կատաղությունից։

Մերկացրած սրերի մեջ առած՝ ներս բերին նրանց ինձ թվում եր, աչքերս կը մթնեն, և ուշակորույս կընկնեմ վայր… Ահ, ի՞նչ զարմանք. նրանց հաղթական դեմքը, նրանց վրեժինդիր հայացքը մի նոր ուշ, մի նոր կենդանություն ներշնչեցին ինձ, և յերբ յես՝ այլս չկարողանալով զսպել ինձ, գոռացի «Սարոկին, Խայթ Շտախբերդ. Մարքս», — զզացի, վոր վոչ մի բռնություն, վոչ մի կապանք չի կարող մարդու աղատ կամքը մեղցնել. — «Վողջուն-ներս… կեցցեք»… գոռացի ես, իմ պատասխանին սիրալիր ժպտացին նրանք և յես պահապանների լտպտերների աղոտ լույսի մեջ նշմարեցի այն ամրակուռ շղթան, վորով կապել եյին նրանց ձեռք ու վոտքը…

Բանտում իրարանցում ընկավ. Փեղկերը

շարժվեցին, յերկալի վաճառակներից յերեսում ելին ձեռքեր դեպի նորեկ կալանավորներն ուղած, — «Ընկերներ, բարով եկաք, չվհատվեք. «բաշկիկներ են.»

Սկսվեց խառնիճաղանչ աղմուկ. Ամեն մի բանտարկված թարմություն և զգում, յերբ նոր կալանավորներ են բերում. նրանք ուրախացած գոռում են միմիանցից բան իմանալու համար։

Առաջին գործս եր ընկերներիս հետ հեռախոս ունենալ, և գա աջողվեց առանց մեծ գլուխարության։ Շնորհիվ յերբորդ հարկի անծանոթ բարեկամիս՝ տրամադրությանս տակ կար, թեվ, թուղթ և մատիտ։

Առաջին նամակը, գրաված եր զսպված՝ և մութ ակնարկներով՝ յերկի բանտարկն լրտեսներից խույս տալու համար։ Ընկերներիս տրամադրությունը լավ եր. նրանք փակված եյին միասին, միայն անհանգստանում եյին մի բանից. հնողրում եյին ինձ, իմանալ դաշտային դատարանին են յանձնելու իրենց, թե միայն զինվորական. իբրև անչափահասների, յույս ունեին վոր պատիժը ծանր չի լինիլ։

Եես ատահնման մեջ յեի. գրեմ, թե վոչ, նախ՝ գուցե եսփերը սխալված եւ յերկըորդ՝ ինչ առավելություն, յեթե նրանք որ առաջ իմա-

նրան իրանց գլխի դավիքը, յես նրանց սիրտ տըշ վեցի:

«Ժամը տասին նշանակված ե դաշտային դատարան. մեզ տանելու են ոմբածիդների զորանոցը քննելու»:

Ստացա նրանց երկտողը .. լուրը տարձվեց ամբողջ բանտը:

Սոսկալի եր մեր դրությունը. կալանավորները մի մարդ դարձած՝ տանջվում եյին ընկերներիս վիճակով. միակ հույսը, վոր կարող եր դեռ նրանց փրկել, այդ նրանց տարիքն եր.—16 տարեկան եյին՝ Խայթը, Սարոկինը և Մալինինը. Մարքսը՝ այդ հազվապյուտ յերիտասարդը, վորիր ուղղամիտ, վերին աստիճանի ճշմարտասեր բնավորության շնորհիվ այդ անունով եր կոչվում՝ 18 տարեկան եր. Շտախբերդը 20 տարեկան եր. ամենամեծը Նիկիտինսկին եր՝ 23 տարեկան:

Յեվ այդ գեռ թարմ, յեռուն յերիտասարդները, դուրս գալով նեխված կյանքի մժնոլորտից՝ բողոքում եյին նրա դեմ և ամբողջ թափով նետվել եյին հեղափոխության հոսքի մեջ: Յեվ այսոր նրանց վիճակված եր կանգնել դառավորների՝ յերեք սպայի առաջ...

Հսկայական ամբոցն իր խարխուլ սյուների տակ տնքում եր, զսպելով իր քարյա պատերի

մեջ տանջվող ժողովրդի թարմ ու գիտակից տարրի մի ստվար մասը...

Դեռ վերջալույսը չեր մարել. բերին նորից բանտ և յես նրանց առաջին հայացքի մեջ կարդացի զարհուրելի դատավճիռը. նրանց մանկական պարզ, անարատ աչքերը սքողվել եյին խոր տանջանքով, մատաղ հոգին ընկճվել եր մահվան սուսկումի առաջ:

«Մեզ դատապարտեցին մահվան, գնդակահարության. այժմ բանտարկված ենք ջոկ—ջոկ. դողքը, ահազին բազմությամբ, կանգնած ե մեր առաջ»: Լավեց նրանց խեղտված ձայնը...

Բանտարցնցվեց, նորից կենդանացավ. «Խայթ, Սարոկին, Մալինին, գոռացեք այդ տեղից, առացք բարձր, բարձր.. խավարը ցնցվում եր. Սարոկինի բողոքի ձայնը անցնում եր փեղկերից ներս և ամբողջ Բանտը տակն ու վրա եր անում: Բոլորն ուզում եյին խոսել, ամեն մեկը կամենում եր իր թույնը թափել. ու կաշկանդված վագրների պես՝ մոնչում եյին ամրակուռ շղթաներէ տակ: Աղմուկը հսկայանում եր, բանտի տանիքը դողում եր: Յեվ այդ խուլ ազմուկի մեջ յերբեմն լսվում եր տիսուր և մելամաղձոտ յերգի ձայներ... կալանավորները իսկույն լուսում եյին, և իբրև մեմարդ, շնչարգել լսում, կլանում եյին նրանց յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր հնչյունը:

Ամբողջ բանալը ցնցվում էր, ապա քարա-  
նում լրության մեջ:

Հսկերներ, սրանք, արգելում են մեզ խոսել,  
արգելում են մեզ յերգել, բայց մենք կը բողո-  
քենք, մեր բոպեները հաշված են:

«Առավոտյան դեռ լույսը չը բացված մեզ  
պետք ե տանեն գնդակահարելու. ընկերներ, մի  
բան ենք խնդրում ձեզանից—միայն, վրեժինդիր,  
վրեժինդիր լինել և խնդրում ենք չքնել այս գի-  
շեր. մնացեք արթուն վոր մեր այս վերջին ժա-  
մերին զրկված չլինենք ձեզ հետ լինելու միա-  
թարությունից: Խոսեցեք, յերգեցեք մեզ համար.  
ձեր ձայնը, ձեր յուրաքանչյուր հնչյունը թա-  
փանցում ե մեր հոգու խորքերը:»

«Մի քանի ժամ ենք ապրելու ավեք մեզ  
այդ բավականությունը:»

«Յերգեցեք մեզ համար այն գեղեցիկ որը,  
այն փայլուն արշալույսը, վոր վաղը պիտի ծագե:»

«Յերգեցեք մեզ համար զինվորի այն կույր  
գնդակը, վոր մի ժամ յետո պիտի ծակի: մեր  
կուրծքը:»

«Յերգեցեք այն ուխտը, վոր նահատակի  
գերեզմանը ավանդել ե մեզ... ամուր պահեցեք  
մեր զբոշը. նա արյուն—արցունքով ե ձեռք բեր  
ված:»

«Մի մըթմըթալ, իմ պահապան. շուտով

հրաման կըգա, և դու ինձ գնդակահար կանես.  
մի շտապիր, թող ընկերներիս հետ խոսեմ. այլևս  
չեմ վախենում վոչ քո սվինից, վոչ ել հրացա-  
նիցդ, այժմ ավելի քան ապահոված եմ դրանցից:

«Յերգեցեք ընկերներ, յերգեցեք, այն ըմ-  
բոստ հոգին, յերգեցեք այն հուժկու սիրտը, վոր  
աչքերը բաց կնայի մահաբեր գնդակին:»

«Յերգեցեք ընկերներ, այն մոռացված հո-  
ղակույտը, ուր կամփոփովի ընկերներիդ աճյունը:

«Լույս տվեք, ընկերներ, լույս, խավարը խեղ-  
տում ե մեզ...»

Դիմացի փեղկը շարժւեց. լամպարը պլպլաց՝  
պատուհանը շառագունվեց և այդտեղից տարած-  
վեց կարմիր կրակ, նա անցնում եր պահակ-  
ների զլիով ու խավարը ձեղքելով, ընկնում եր  
ուզիկ դեպի ընկերներիս վերջին ոթևանը:

«Կարմիր կրակ. կարմիր լույս».—գոռում  
եյին ամեն տեղից, և այդ խորհրդավոր ժամին  
նա յեկավ ցնցելու, մի կախարդական հմայք  
տվեց ամբողջ բանալին, ու բանալը թնդաց, վո-  
գեվորգեց. չորս կողմից սկսեցին խրոխայերգել:

Կարմիր կրակը վանել եր այն սպանիչ  
կոշմարը, ուր մինչ այդ տիրում եր ամենքի մըտ-  
քին: Վոզելորված ճառեր եյին լսվում այս ու  
այն փեղկից. մյոււները պատախանում եյին նը-  
րանց խրոխայ և ազդու:

Ամենամեծ դժվարությամբ մեղ յաջողվեց ընկերներիս հետ հեռախոս ունենալ. — Խայթ. Սարոկին, Շտախբերգ, Մալինին. ահա ձեզ թուղթ ու մատիտ գրեցեք ձեր վերջին ցանկությունը. ձեր արյան յուրաքանչյուր կաթիլը բոց կըդառնա, կարմիր բոց և կլափե մեր սիրտը, յեթե չգանք ձեր յետկից. նրանք կը բանան հազարավոր կուրացած աչքեր, և մի անեղ ցնցումով կըփշրվեն դարավոր կուռ շղթաները. ձեր. նահատակներիդ արյունից կծնվի մի նոր լույս, հստակ և ջերմ...

Մեր գրած յերկտողը պահակ զինվորներից մեկի ոգնությամբ հասել եր ընկերներիս: Նրանք պատասխանեցին:

«Ընկերներ, — գրում եր Խայթը, — անչափ շնորհակալ ենք. մենք կովել ենք գիտակցությամբ ու թվում ե՝ կատարել ենք մեր պարագը. այդ ե, վոր մեզ միմիթարում վոգեվորում ե մեր մատադ կյանքի այս վերջալույսին. Ընկերներս ու յես ուղարկում յենք ձեզ մեր վերջին կարուտալից հրաժեշտը: Մնաք բարե, մնաք բարե: Սարոկինի նամակը յանձնեցեք իր մոըը:»

«Մայր, — գրում եր Սարոկինը, — մահը ինձ չի ուարսափեցնում, յես ընդունում եմ դա ջերմ գրկախառնությամբ, կաթիդ հետ դու սնուցիր իմ հոգին, բայցիր իմ աչքերը և ցույց տվիր

ազատության ճանապարհը: Թող մայրիկ, դաքեզ մխիթարե... ապրիր վորդուդ յիշատակով. գոռա ամեն տեղ, ասա նրանց այն բոլորը, ինչով վոգեվորում եյիր ինձ:»

«Քո ժողոժիկ»

Զարագուշակ ժամը մոտենսւմ եր, ամբողջ բանտը վուաքի եր կանգնել. լարված ուշադրությամբ հետևում եյին բանտում կատարվող ներքին իրարացմանը:

«Հանկարծ լսվեց. «Смирно!», և բանտը լոեց. տեղացին սպայի հրամանները. լսվեց ներքեւում խուլ հեծկատանք, ծանրքայլերի անցուղարձ. դռները բաց ու խուփ եղան, և մի պահ ամեն ինչ լոեց:

«Ընկերներ, լսվեց Շտախբերգի հուժկու ձայնը, շուտով կը տանեն մեղ, ազգականների տեսակցություն մահից առաջ... վորպիսի հեգնանք...»

«Յերգեցեք ընկերներ, վայրկաններ են մնում, դուրսը զորքը պատած. մեզ տանելու պատրաստություններ տեսնում. շուտով կը բաժանվենք ձեզանից: Յերբ մեզ կը տանեն, խոսեցեք բարձր, մենակ չ'գնանք:»

«Հինգ ըուպե տեսակցություն մահից առաջ. դա ծաղը ե ընկերներ. — Բողոքում եր մանուկ Մալինինը, — թունավորող ծաղը. անդամ անարդ

սան մոտ, այս մի քանի բոպեն հանգիստ չեն տալիս մեզ...

Քահանա են բերել, ընկերներ, վոսկի խաչը ձեռքին, արծաթ ավետարանը կըծքին, ասուժե. «Յես տիրոջ ծառան եմ, յես ավետարանի խոսքն եմ քարոզում, խոստովանեցեք ինձ. յես մասունք կ' տամ ձեզ. քավեցեք մեղքերդ, միջնորդ կըլինեմ Աստծո և ձեր մեջ»...

—Հեռացրու այդ վոսկյա խաչը, բաայուշկա, խրոխտ ու հանդաբա ասում եր Մարգար, նրա խաչը փայտից եր, իսկ մերը — ահա այստեղ ե. բանտի յետեը, սարի գագաթին. հեռացեք այսուեղից բաայուշկա, այս տեղը ձեզ համար չեւ»

Նորից լսվեցին սպայի հրամանները. հրացանները շարժվեցին. փամփուշտները շառաչունով դարսվեցին բներում. ներքին յարկում լըսկեց խուլ խեղդոց: Սոսկալի վայրկյաններ եյին դրանք մեզ համար. — տանըւմ են, տանըւմ են, — մարզող սրտի բարախումի հետ բողոքում եր ներքին ձայնը — իսկական մարդը...

Ցերկաթ ձողերը ամուր սեղմած՝ դողում եյինք, վոչ մի շնուկ չեր խանգարում այդ ձնշող վայրկյանները. սարսուռ եր անցել ամբողջ բանտի մեջ և մեռցրել ամեն մի կենդանություն...

Այդ ճգնաժամի մեջ լսվեց կատաղի մաքառման մի սոսկալի ձայն. — «Խեղդում են մեզ, ըն-

կերներ, խեղդում են, վոր չկարողանանք ձայն հանել»...

«Արգելում են մեզ վերջին հրաժեշտը տալ» զոռում եր խեղդված ձայնով Մարուկինը: Գոռում, զոչում... ու այդ սարսեցնող աղմուկի մեջ լըսկում եր Մալինինի մանկական սիրտ կտրատող հեծկլատանքը:

«Մնաք բարե, բարե մնաք, ընկերներ»... «Ընկերներ, աղաղակում եր Խացթը, յերգեցեք մեր հուզարկավորության յերգը, յերգեցեք...» Յերգել... յերգել մահվան յերգը, յերբ քո սիրելի, քու պաշտելի ընկերները նայում են քեզ, ինչ սիրտ պիտի լինի, ինչ քար պիտի լինի մարդ... և ամբողջ բանաը լուռ եր. նա չեր յերգում... նա քարացած կանգնած եր այդ սոսկալի վայրագություններից ճնշված...

ՅԵՐԿԱՅ

Լսվեց առաջին Համազարկը... յերկրորդը... խուլ վորոտի հետ մի ցնցող ճիչ... ու ամեն ինչ լոեց... բանաը դողաց մեր կատաղի հորձանքից... պայցքարի կըակը զրոշմվեց մեր սրտերում այնքան խորը, այնքան վշտավի ու ցավատանչ...



## ՆՈՐ ԴԱՐԲՆՈՑԸ 1923

Դարբնանց տունը գյուղի յերեխաների համար ամենասիրված տեղն եր. հավաքվում, ժամերով նայում ելին դարբին Ոհանին, յերբ նա աշխատում եր:

— Փչե, Մուկուչ, փչե.

Ճոճկում ե փքսի հետ կաղլիկ Մուկուչը ու հնոցում կրակը ավելի ու ավելի ե բորբոքվում:

Պողպատը կարմրում եր: Ոհանը մուրճը ձեռքին հարված հարվածի հետ՝ տարածում եր շուրջը կայծեր և համաշափ զարկերով կենդանություն եր տալիս դարբնոցին:

— Մուկուչ փչե, խոփը սրենք, ձեկչը ուղղենք, գութանը կարգի բերենք. ցանքով մոտենում ե, հողը մշակենք, վար ու ցանք անենք, մեր որը հոգանք:

— Բարի հաջողում, ուստա Ոհան,

— Բարին արևներիդ, յերեխաներ ջան:

Ոհանը սիրով ընդունում եր մանուկներին, թույլ եր տալիս ոգնելու իրան—փուքս փչելու, ածուխ, ջուր բերելու, դարբնոցը սրբելու ու այդ բոլորը նուանք կատարում ելին մեծ բավականությում:

Մի որ նա դիմեց իր դրացի Ուհաննեսին.

— Սանահեր, ուզում եմ քու Մաղնին սուկորացնեմ իմ փեշակը, ինչ կասես:

— Ինչ պիտի ասեմ, ուստա, ես գյաղեն լուսը չբացված քեզ մոտ ե. ուշըն ու միտքը դարբնոցն ե. վերցրու, բայց խելքս բան չի կտրում: Դու քու փեշակով ինչ հացի յես հասել, վոր ուզում ես սրան ել տիրացնես:

— Մաղին ուղուփով յերեխս յե, շատ լույ դարբին կը դառնա մեր գյուղի համար:

— Ետ թե լավ ե, ինչի՞ քու տղերանցից մեկին փեշիտ տակը չես առնում:

— Մարդ պետքե փեշակը սիրե, վոր սըրտովը չեղավ, յերեսին թքե, մեր տղերանց մեջ սեր չկա:

Ուհաննեսը հոնքերը կիտեց, յերեխի ձեռքն առավ և քթի տակ ինչ վոր փնթփնթալով տվեց դարբնին:

Մի խարխուլ շենք եր, պատի մի կողմը քանդված, միակ լուսանցքը միշտ բաց եր, վորը և ծառայում եր վորպես դարբնոցի ծխնելույզ:

Յեթե մի փոքրիկ կենդանություն կար, այդ  
մեծ թթենու ծառն եր, վոր շվաք եր անում  
թե դարբնոցին ու թե զովացնում ողը:

Ժամանակը աննկատելի անցնում եր. Ոհա-  
նը շատ եր մտերմացել իր նոր աշակերտի հետ  
ու միշտ նրան զովում եր ամենքի առաջ:

Մի որ իր աշակերտին պատմեց քաղաքի  
դարբնոցների և արհեստանոցների մասին և այն-  
քան վառ նկարագրեց, վոր Մադուի մտքից չեր  
հեռանում քաղաքը. մի ներքին բնագդ տանում  
եր նրան այդ հեռու աշխարհը, այդ մեծ գործա-  
րանները...

Յեվ մի որ, ինչպես ասում են, զլուխը տ-  
սավ փեշի մեջ, ու ճամբա ընկավ դեպի քաղաք:

Մեծ եր նրա քաղաք ընկնելու պատմու-  
թյունը, բայց այդ մասին մի այլ անդամ, Նա  
մտնում է արհեստավորաց դպրոցը, մեծ հաջո-  
ղությամբ ավարտում ե, ապա բարձրագույն  
տեխնիքական դպրոցը, բայց նրա իդյալը, նրա  
աշխատանքը ու ամբողջ հոգին զյուղն եր:

Նա միշտ ձգտում եր անցնել զյուղ, վոր-  
պեսզի իր ամբողջ պատրաստականությամբ ող-  
տակար լիներ նրան, բայց դա նրան չեր հաջող-  
վում: Յերկաթե բռունցքը ամեն անդամ ճնշում  
եր նրան, սպանում եր նրա ծրագիրները...

Վերջապես նրա յերազած ու վայփայած

ժամանակը յեկավ. ու զինված զիտության, տեխ-  
նիկայի ամենանորագույն պաշարով նետվեց  
զյուղը:

Նույն դարբնոցը, նույն քանդված պատն ու  
ծհրացած ու կորացած Ոհանը:

— Բարի հաջողում:

— Բարին արևիդ: Ամոթ չլինի հարց-  
նելը, ով ես:

— Մոռացել ես քու հին աշակերտին,  
Խեժմանց Մադուին:

Վարպետը աչքերը լայն բացած, զարմացած  
նայում եր. մի գեղեցիկ, շնորհալի յերիտա-  
սարդ եր կանգնած նրա առաջ: Մի պահ ուզեց  
վրա ընկնել համբուրել, բայց չը համարձակվեց...  
Ապա իրան հավաքելով շարունակեց. — Այ դու  
բարով ես յեկել, հազար բարով, դե պառավել  
եմ, բալա ջան, չը ճանաչեցի: Քո մասին շատ  
բաներ ենք լսել, այդ բոլորը ճիշտ ե...

— Զ'զիտեմ վարպետ, ինչ եք լսել. ճիշտը  
սա ե, վոր յեկել եմ զյուղ և աշխատելու եմ  
այստեղ:

— Մեր այս քանդվածում ինչ պիտի շինես,  
վոր յեկել ես, այ վորդի:

— Յեկել եմ հինը քանդելու ու նրա տեղ  
նորը շինելու:

Ոհանը մի քանի քայլ յետ-յետ քաշվեց ու

Նայեց իր դարբնոցին:—Նորը շինում ես շինիր,  
բայց հնին ձեռ մի տալ... դուք ուսումնական-  
ներդ ետպես եք. միայն քանդեք ու քար ու  
քանդ անեք...

— Վարպետ, յես քու ասած ուսումնական-  
ներիցը չեմ. գյուղը ինձանից վոչ մի վնաս չե-  
տեսնի. իսկ քու ես դարբնոցին վախիլ մի,  
ձեռք չեմ տա:

Ոհանը նորից նայեց իր դարբնոցին, ապա  
իր նախկին աշակերտին ու ձեռքերի խորհրդա-  
վոր շարժումով դիմեց նրան:

— Սա իմ պատերիս արհեստանոցն ե. պա-  
հել են նրանք վատ թե լավ, կըպահեմ և յես,  
քանի շունչս բերանումս ե, քանի կոնսերումս  
ուժ կա:

Նոր դարբնոցի հիմքն արգեն դրված եր.  
աշխատանքը յեռում եր. գյուղը ամբողջապես  
ոգնության եր յեկել՝ վորը քար եր կրում, վորը  
ավագ ու փայտ եր բերում և մի կարճ ժամա-  
նակում շենքը պատրաստ եր. դարբնոցը մեծ  
եր ու լուսավոր. կառուցված բոլոր հարմարու-  
թյուններով:

Սկսվեց մեքենաների դասավորությունը.  
ճախարակներ, վենախլատորներ, շոգեշարժ մուր-  
ճեր, մանգանաներ, վագրանկաներ... դրվեց և  
վերջին մատորը ու ամեն ինչ պատրաստ եր:

Դարբնոցը կառավարում եր ինքը Մաղին  
իր հմուտ, մամսագետ վարպետների ձեռքով.  
գյուղի ամբողջ յերիտասարդությունը աշխա-  
տում եր այնտեղ:

Դարբին Ոհանը իրան հին կարկատած փուք-  
ով դեռ փչում եր ու չեր հաշտվում այն մտքի  
հետ, վոր կողքին մի նոր դարբնոց ե հիմնվել:

Մի որ Մաղին յեկավ նրա մոտ:

— Վարպետ, առաջին անգամ դու ես իմ  
ձեռը մուրճ տվել, այժմ ել յես ուզում եմ  
նորից, մեր նոր բացված արհեստանոցում, միա-  
սին աշխատենք:

Ոհանը թեև սրտանց դժգոհ եր, բայց չկա-  
րողացավ մերժել: Իր հին մուրճը վերցրեց ու  
Մաղին առաջնորդությամբ մտավ նոր դար-  
բնոցը:

Նա իր աշքերին չեր հավատում, գյուղի  
յերիտասարդները թեվերը քշտած, կաշվե գող-  
նոցները կապած, աշխատում եյին. կյանքը յե-  
ռում եր. ինքը Մաղին գործարանի զլուխ ան-  
ցած՝ ցուցմունքներ եր տալիս ու դեկավարում  
եր ընդհանուր գործը:

Ահա հալարանից մի կույտ յեռացման աս-  
տիճանին հասած յերկաթի զանգվածք առան  
շողեշարժ մուրճի հարվածների տակ, նա հղի-  
վեց, կսկսվեց ստացավ քառակուսի ձև. ապս:

անցնելով վոլորակների միջով մի քանի բոպեյից,  
այդ զանդվածքը դառավ աշխատանքի հարմար  
յերկաթի մի բարակ ոլորուն ձև, գեղեցիկ,  
հարթ ու հավասար:

Արհեստանոցի մի այլ բաժանմունքը հատ-  
կացրած եր զանազան պյուղատնտեսական դոր-  
ծիքներին. դարբնվում եր այնտեղ գութանի խո-  
փը, ձևիչը, մաճը, լծակը, անիվները և դա կա-  
տարվում եր այնքան արագ, կող ու գեղեցիկ:

Ահա մի այլ, գործիքների մասը, կացին,  
ցաքատ, բան, քլունգ ուրագ, մյուս անկյունում  
մանդաղ, գերանդի, զանազան ձևի շղթաներ և  
այդպես մասնագիտորեն բաժան-բաժան գործում  
եյին մեկը մյուսից անկախ:

Ոհանը հիացած եր. նա այնքան եր տարվել,  
վոր մոռացել եր աշակերտին. մի բաժանմունքից  
անցնում եր մյուսը, մուրճը ձեռքին ամուս սեղ-  
մած՝ դիտում նայում եր հսկալական մեքենանե-  
րին, վիթխարի շոգեմուրճերին, ճրեղեն բոցերի  
մեջ հալարան հնոցներին, բազմաձև ճախարակա-  
վոր վոլորակներին, արագաշարժ մոտորներին...  
Թե ինչ եր մտածում այդ վայրկյանին, ինքն  
ել չգիտեր, բայց բնագլարար մի ինչ վոր ներ-  
քին ցավ եր զգում, մի մշուշապատ ծանր թա-  
խիծ պատել եր նրա ալեռ ճակատը:

Ինչու ինքը այնքան յերկար տարիներ մնա-

ցած ե յեղել խավարի, կուրության մեջ: Յեթե  
այս բոլորը այն ժամանակ լիներ, յերբ ինքը  
յերիտասարդ եր. ինչ թափով կը նետվեր նոր  
արհեստանոցը և ինչպես կը ձուլվեր մեջենաների  
հետ:

Իսկ այժմ կորացած մեջքով, յերբ բաղուկ-  
ների մեջ այլևս վոչ մի ուժ չկա... յերբ ամեն  
ինչ մարել ե իր մեջ:

Նա լուս դուրս յեկավ, քայլերը ուղղեց գե-  
պի իր հին արհեստանոցը:

Զգային ցնցումով մուրճը խփեց զնդանին,  
կարծես զնդանը մի սուր ձիչ արձակեց կրկին  
խփեց, շուռ յեկավ նայեց իր քանոդված պատին,  
մըրտած տանիքին. անկյունում հավաքված աղ-  
բակույտին. ապա վոտի մի հարվածով շուռ տվեց  
ջրի կորած տաշտակը, մի կողմը զցեց լաթե-  
րով պատած հին փուքսը, յերկաթե ունելիքնե-  
րը... Սրտի խորքից ծանր ախ բաշեց, ապա  
մուրճը առաջ սկսեց ինքնիբան խոսել: «Գնանք  
իմ միակ բարեկամ, այլևս մենք իրար հետ  
չհնք աշխատի, այլևս մեր գարբնոցում չի լսվի  
քո հարվածների հարազատ ձայնը...»

Սրանից հետո մեր զյուղի նոր դարբնոցի  
շոգեշարժ մեքենաների վոլորապուլյաների,  
հսկա մուրճերի վորոտը կը լսվի, իսկ մենք կը

լոենք և հավիտյան կը լու նաև մեր արհեստանոցը...»

Նայեց ետ որվա իր աշխատանքներին—ահա ծայր սրած խոփը, կոտրած մանգաղն ու գերանդին... Շուռ ու մուռ տվեց, հավաքեց ցիր ու ցան արած ածուխը. մի վայրկան կարծես ուզում եր կրակ անել. ձեռքերը թուլացան. նստեց շեմքի քարի վրա. գլուխը առավ ձեռքերի մեջ, ընկավ խորը մտատանջության մեջ...

Նրան պատկերացավ իր մանկությունը, իր յերիտասարդության որերը, տասնյակ տարիների իր քաշած չարքաշ կրանքը... Մի բողոք, մի ներքին պահանջ եր զգում ինքն իրան ձեռքով խորտակելու քար ու քանդ անելու իր իսկ քառասուն տարվա մըուտած արհեստանոցը...

Մոտեցավ միակ լուսանցքին, կանգ առավ... լուռ գիշեր եր. հեռվից լսվում եր զյուղի նոր դարբնոցի աշխատավոր մոտորի համաշափ հերը:

Տատանման մեջ եր, մի ինչ վոր զարմանալի միտք յեկել պաշարել եր նրա հիվանդոտ ուղեղը...

Դուրս յեկալ դարբնոցից, մի քանի քայլ առաջ գնաց, նորից կանգ առավ... ծանը եր, զարհուրելի այն միտքը, վոր պաշարել եր նրա գլուխը...

Նա սոսկում եր... սարսափում եր, բայց

զգում եր, վոր անողոքորեն պետք ե կատարվեր... կարծես մի աներենույթ ուժ մղում եր նրան...

Նա քայլերը ուղղեց գեղի խոսի գեղը... «մի խորոմ խոտ ու մի լուծկի...» կարծես մեկը փսփսում եր նրա ականջին...

Ցեվ մի քանի վայրկանից դարբնոցը բոցերի մեջ այրվում եր...

Թող քու կրակը յերկինք համար... ամբողջ աշխարհը տեսնի Ոհանի դարբնոցի մահը, թող այրվի բոլորը, մոխիր դառնա... հին դարբնոցի հետքն անգամ չինի...

Նա անընդհատ նայում եր կրակին... կարծես ազատվել, փրկվել եր մի մեծ տանջանքից... մի ծանը բեռից...

Հին դարբնոցից մի հիշատակ եր մնացել. իր մուրճը, վորը ամուր սեղմել եր ձեռքին ու շշերից թափվում եր վշտի, տանջանքի թե ուրախության արցոնքներ...

Առավոտ եր. գարնան զեղեցիկ առավոտ...

Հեռու լեռների կատարներից տարածվում եր արեի վարդագույն ճառագայթները, հետը բերելով յեռուն կյանք, թարմություն ու բերկընք:

Գյուղը արթնանում եր իր խորը քնից. Մեղաղողանջեց նոր դարբնոցի կոչնակը. բոլորը շտապում եյին այնտեղ աշխատանքի... Միայն Ոհանը

ծանր խոհերով բեռնավորված դեռ կանգնած եր  
իր փլատակների առաջ:

- Բարեւ իմ հին վարպետին, — ձեռքը դրեց  
Ոհանի ուսին Մաղին:

Ոհանը խիստ-խիստ նայեց իր աշակերտի  
պայծառ ու խելացի աչքերին ու գլուխը խո-  
նարհեց ցած: — Գնանք, — գոչեց Մաղին առնելով  
Ոհանի ձեռքը իր ափերի մեջ:

Ոհանը լուռ հետևեց նրան. թե ինչպես մը-  
տավ նոր գարբնոցը՝ զյուղի հաղթանակի այդ  
նոր վայրը, ինքն ել չիմացավ:

Խփում եր նոր սալին, իր հին մուրճը ու  
մտածում... վորքան արագ կատարվեց այս բո-  
լորը... վորքան արագ...

## ՄԵՖԵՆԱՎԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ 1907թ

Յեվ դու, հսկայական մեքենա, թափով դառ-  
նում ես առանցքիդ շուրջը տաղտուկ մի որի-  
նակությամբ. քո ամեն մի պտուտակը, ամեն  
մի անիվը շարժվում են նույն ձշտությամբ,  
նույն համաշափի զարկերով ու վոչ մի վայրկլան,  
վոչ մի ակնթարթ չեն շեղվում սահմանված ճա-  
նապարհից: Վոլորվում ես դու իշխող ու կատաղի  
և վաղը և մյուս որը և հավիտյան...

Ու յես, փոքրիկ մըջունս, աշխատում եմ

քեզ հետ զուզընթաց իբրև հարյուրավոր մաս-  
նկներիցդ մեկը, հնազանդ ու ստրուկ:

Բայց յես կարող եյի ջարդ ու փշուր անել  
եղ, բավական ե զալատնիկներիդ մի ծայրը թե-  
քեմ, բավական ե ժանիքներիդ մեջ մի փոքրիկ,  
միած պողպատ ձգեմ և գու կը վորոտաս կա-  
տաղի ու կը փշրվես: Կը լոեն միորինակ զար-  
կերդ, կընդհատվեն հսկայական անիմսերիդ փա-  
ռահեղ պտույտները, և տեղդ կմնա այլանդակ,  
անձեւ մի կույտ. ու խուլ հիշողություններ կը  
մրմնջաս միայն անցած, գնացած որերիդ համար:

Բայց ինչու չեմ խորտակում քեզ. ինչու  
աչալուրջ հսկում եմ, վոր պտուտակներիցդ և վոչ  
մեկը վնասվի... Յերբ ձայնդ ժամանակից շուտ  
կամ ուշ ե լսվում, լեզապատառ պտուիվում եմ  
շուրջդ, յուղում հաղարավոր շրթունքներդ, շո-  
շափում ամեն մասնիկդ: Իսկ դու հաղթական ելի  
դառնում ես տրորելով անիմսերիդ մեջ և իմ  
զգացմունքները, և իմ սիրած-փայփայած իղձե-  
րը, և ինձ ամբողջովին...

Դու դարձրել ես ինձ քո կտորներից մեկը,  
թերեւ քեզ համար ամենափոքրիկը:

Յեվ յես՝ իբրև մի կտոր մետաղ՝ ձուլվել եմ  
անիմսերիդ մեջ, դառնում եմ առանցքիդ շուրջը  
նույնքան կատաղի, նույնքան մոլեգին:

Այն որից, յերբ քեզ ճանաչեցի, այն որից,

յերբ ընկա քո դուռը, լսեցի մի սարսեցնող ձայն։  
Հոգիս եր խոսում, բողոքում. ցընցվում եր տան-  
ջանքի ցավից. «Յես մարդ եմ, ի՞նչու մեքենա  
դարձա»։ Բայց ինքս ինձ մխիթարում եյի. «Յերբ  
մեքենան կանգնի—չե՞ վոր նա միշտ չի աշխա-  
տում—մենք դուրս կը թռչենք, կը գրրկենք ողը  
յերկինքը, ազատությունը»...

Բայց անցան այն որից շատ տարիներ ու  
թուան իմ հոգուց այն սփոփիչ մանուկ տեն-  
չերը. ու ահա այսոր մազերս ճերմակել, մեջքս  
կորացել, և յես գլխակոր յուղում եմ ու յուղում  
մեքենան։ Ու վաղը, զուցե և այսոր՝ նա իր  
ժանիքներով կրգկտե, վերջ կդնե իմ փթած կյան-  
քին և ինքը դարձյալ կմնա հսկա ու միշտ հաղ-  
թական և իմ արյան այն սե բիծը դեռ յերկար  
կտահիմ նրա պաղ պղղղատի վրա...

Անցած գիշեր նյարդերս թմրել, ու մի  
պահ քարացել եյին բիբերս։ Անցյալի հուշերը  
յեկել-ալաշարել եյի ինձ։ Հիշեցի, յերբ դեռ քսան  
տարեկան, թարմ յերիտասարդ, նետվեցի աշ-  
խարհ և լի յեռանդով ձեռներս մեկնեցի այս  
նույն մեքենային. ամուր սեղմեցի նրա ցուրտ  
լծակը ու ասացի. «Մենք ընկերներ ենք այսու-  
հետեւ։ Յուրաքանչյուր անցնում եր յերակներիս մեջ  
և թվում եր, մատներիս ծայրերից սկսում եր  
պողպատանալ ամբողջ մարմինս։



50784